ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 10

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2019թ. հուլիսի 4-ի նիստի

Ներկա էին գիտական խորհրդի 67 անդամներից 54-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի նախագծի քննարկում:

   Զեկուցող՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ.Ծպնեցյան

2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ Գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Հ.Ծպնեցյանը ներկայացրեց գիտական խորհրդի քննարկմանն և հաստատմանը ռեկտորատի 02.04.2019թ. նիստում հավանության արժանացած Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի նախագիծը:

Զեկուցողը նշեց, որ փաստաթուղթը ստեղծվել է համատեղ ՀԱԱՀ որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն Մ.Մովսիսյանի հետ: Նշվեց, որ լրավճարների հաշվարկման և վճարման նոր սկզբունքի սահմանումը կարևոր է որպեսզի «մարդիկ չքնեն դափնիների վրա» և ավելի հետևողականորեն զբաղվեն գիտական գործունեությամբ:

Արտահայտվեցին՝ Ա.Խաչատրյանը, Հ.Հարությունյանը, ռեկտոր Վ.Ուռուտյանը , որոնք վերը նշված կարգի նախագիծը գնահատեցին որպես կարևոր քայլ դասախոսների գիտական գործունեությունը խրախուսելու գործում:

Որոշեցին՝ Հաստատել ներկայացված սկզբունքորեն նոր ՀԱԱՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը /կցվում է/:

Որոշումը ընդունվեց բաց քվեարկությամբ միաձայն:

Լսեցին՝ Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Միլվա Արթուրի Աթոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Միլվա Արթուրի Աթոյանի թեկնածուական ատենախոսության թեման «Խաղողի քիչ տարածված տեղածին սորտերի ուսումնասիրությունը Հայաստանում բարձրակարգ գինիների արտադրության համար» վերնագրով, Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար նշանակել տեխնիկական գիտությունների թեկնածու Գ.Ա.Սամվելյանին:

Լսեցին՝ Գյուղատնտեսության մեքենաշինության, ավտոմատացման և տեխնիկայի շահագործման ամբիոնի ասպիրանտ Ալեն Ռաֆայելի Սիմոնյանի ամփոփիչ հաշվետվությունը (01.10.2018թ.-30.06.2019թ.) գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Լեռնային պայմաններում խոտհավաք մեքենաների մեքենամասերի երկարակեցության բարձրացման ռացիոնալ մեթոդների մշակումը և իրականացումը» թեմայի վերաբերյալ:

Արտահայտվեցին՝ պրոֆեսորներ Հ.Հակոբյանը և Ս.Մարգարյանը նշեցին, որ լավատեղյակ են ասպիրանտ Ա.Սիմոնյանի հետազոտական աշխատանքների մասին: Նա կարողացել է վեր հանել հնձիչների խափանումների առաջացման պատճառները և նոր եղանակներ մշակել ու կիրառել լեռնային բնական ոչ մեքենահարմար խոտհարքների պայմաններում խոտհնձիչների շահագործական հուսալիությունը բարձրացնելու համար: Դրա շնորհիվ բարձրացել է հնձիչների արտադրողականությունը և իջել հավաքված խոտի ինքնարժեքը: Գտնում են, որ ասպիրատն իր առջև դրված խնդիրները հաջողությամբ լուծել է: Հաշվետվությունը կարելի է հաստատել:

.րոշեցին՝ Հաստատել պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Լեռնային պայմաններում խոտհավաք մեքենաների մեքենամասերի երկարակեցության բարձրացման ռացիոնալ մեթոդների մշակումը և իրականացումը» գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվությունը:

Լսեցին՝ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կողմից ՀԱԱՀ Հոգաբարձուների խորհրդի կազմում ընգրկվելու համար թեկնածություն առաջադրելու հարցը:

Որոշեցին՝ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կողմից ՀԱԱՀ Հոգաբարձուների խորհրդի կազմում ընգրկվելու համար առաջադրել ֆինանսահաշվային մաբիոնի դոցենտ , տնտեսագիտության թեկնածու Արեգ Բաղդասարյանին:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ միաձայն:

Լսեցին՝ ՀԱԱՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանը ներկայացրեց գիտական խորհրդի քննարմանն և հաստատմանը Հայաստանի ազգային ագրարարային համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման վերանայված չափորոշիչները

/ կ ց վ ու մ են /:

Որոշեցին՝ Հաստատել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանի կողմից ներկայացված վերանայված ՀԱԱՀ-ի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման չափորոշիչները:

Որոշումը ընդունվեց բաց քվեարկությամբ միաձայն:

Լսեցին՝ Ֆինանսահաշվային ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Գագիկ Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել ֆինանսահաշվային ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Գագիկ Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման «Փոքր և

միջին կազմակերպությունների վարկունակության գնահատման հիմնախնդիրները /Հայաստանի Հանրապետության նյութերով/» վերնագրով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մաթևոսյանին:

Լսեցին՝ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Հայկ Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Հայկ Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման «Օրգանական գյուղատնտեսության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրաչյա Ծպնեցյանին:

Լսեցին՝ Ուսումնական աշխատանքների գծով պրառեկտոր Ռ.Մակարյանի հաղորդումը կրթական չափորոշիչներում և գործող ուսումնական պլաններում մասնակի փոփոխություն կատարելու մասին: Առկա ուսուցման մագիստրատուրայի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրարային մենեջմենտ» կրթական ծրագրի և «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես» կրթական ծրագրի ուսումնական պլանների և մասնաճյուղերի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2019-2020 ուս. տարվա վարձավճարների հաստատման վերաբերյալ:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով ներկայացված հարցերը գիտական խորհուրդը միաձայն

ո ր ո շ ու մ է՝

/որոշումը կցվում է/:

.ւեցին՝ Ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Սերգեյ Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել Ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Սերգեյ Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման «Գյուղական զբոսաշրջության սոցիալ-տնտեսական նշանակությունը և զարգացման քաղաքականության ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Աշոտ Ոսկանյանին:

Լսեցին՝ Արամայիս Արմենի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Արամայիս Արմենի Մկրտչյանի Ե.18.01 «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ, «Պտղային ալկոհոլային խմիչքների արտադրության տեխնոլոգիայի կատարելագործում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Լսեցին՝ Ալեն Ռաֆայելի Սիմոնյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Ալեն Ռաֆայելի Սիմոնյանի Ե.20.01 «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ, «Լեռնային պայմաններում խոտհավաք մեքենաների մեքենամասերի երկարակեցության բարձրացման ռացիոնալ մեթոդների մշակում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Լսեցին՝ Ռոբերտ Սոսի Քոչարյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Ռոբերտ Սոսի Քոչարյանի Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ, «Դրամաշրջանառության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսական աճի ապահովման գործընթացում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Լսեցին՝ Հրաչյա Հայկազի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ Հրաչյա Հայկազի Գրիգորյանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, «ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի մեղմման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան